ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/57

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Ֆիլիշին» ՍՊԸ

Երրորդ անձ՝ «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Մուրադյանի, Գ. Ոստանիկյանի

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Եգորյանի, Ս. Ղազարյանի, Լ. Առուստամյանի, Ք. Պետրոսյանի

«Ռաֆէլգրիգ» ՓԲԸ ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթ, վերելակների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ֆիլիշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 02.08.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով անցկացվող գնումներին մասնակցելու համար հայտի ներկայացման ժամկետի բացթողումը համարել հարգելի և Կազմակերպության հայտը համարել ընդունված:

2. Եթե բողոքը քննող անձը գտնի, որ առաջին պահանջը հնարավոր չէ բավարարել, ապա խնդրել են մրցույթն անվավեր ճանաչել՝ Կազմակերպության կամքից անկախ պատճառներով մասնակցության անհնարինությամբ պայմանավորված:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.07.2019թ.-ին:

31.07.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 02.08.2019թ.-ին:

02.08.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 09.08.2019թ.-ին, 16.08.2019թ.-ին և 27.08.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

27.08.2019թ. -ին «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.08.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.08.2019թ.-ին:

2. **<u>«Ֆիլիշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ֆիլիշին» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի հուլիս 29-ին ժամը 11:00-ին պատվիրատու Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված է եղել գնումների մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման վերջնաժամկետ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով գնումների համար:

«Ֆիլիշին» ՍՊԸ-ն (հետայսու Կազմակերպություն) ի դեմս իր ներկայացուցչի, սույն մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է կազմել և փորձել է կապ հաստատել ֆինանսների նախարարության հետ նաև 26.07.2019թ. սակայն ապարդյուն:

29.07.2019թ. Ժամը 09:37-ից սկսած մուտք է գործել armeps.am էլեկտրոնային կայքէջ, հայտը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու նպատակով:

Կայքը չի արձագանքել հրամաններին, չնայած, որ ինտերնետ հասանելիություն եղել է, ինչից հետո ժամը 09:50-ից սկսած ներկայացուցիչը սկսել է զանգահարել ՀՀ ֆինանսների նախարարություն աջակցություն ստանալու խնդրով: /Ինտերնետային հասանելիության վերաբերյալ ապացույցները ներկայացուցչի համակարգչի ինտերնետային ծրագրի հիշողության ցանկի վերլուծությունից ստացված տվյալներն են և ինտերնետային օպերատորին կատարված հարցման պատասխանը:/

Նախարարության հեռախոսահամարի զանգերը մնացել են անպատասխան և վերջինս շարունակել է կայքից օգտվելու անհաջող փորձերը հայտն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար, մինչև ժամը 10:40: Միայն ժամը 10:43-ին է համապատասխան աշխատակիցը պատասխանել և 9 րոպեանոց խոսակցության ընթացքում, ըստ էության չի օգնել ընկերության ներկայացուցչին, որպեսզի վերջինս կարողանա ուղարկել համապատասխան ֆայլերը: Հիշյալ «օգնությունը» կանխորոշված է եղել ի սկզբանե կատարված բարեվարքության շրջանակներից ակնհայտորեն դուրս հետևյալ արտահայտությամբ, թե «...պետք է վունդերկինդ լինել, այս 10 րոպեում հայտը ներկայացնելու համար ...» :

«armeps.am» կայքի տեխնիկական խնդիրների պատճառով և առավոտից թեժ գծի հեռախոսազանգերի անպատասխան մնալու (փաստորեն նախարարության աշխատակիցների անգործության) պատճառով ներկայացուցիչը զրկվել է խորհրդատվություն ստանալու հնարավորությունից:

Հայտն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու փորձերը շարունակվել են մինչև ժամը 12-ի սահմանները, սակայն ապարդյուն:

Հայտը ներկայացնելու փորձը կատարվել է մի քանի ներկայացուցիչների միջոցով և տարբեր համակարգիչներով:

Հեռախոսային խոսակցությունների ընթացքում ֆինանսների նախարարության աշխատակիցները «armeps.am» կայքի անհասանելիությունը փորձել են բացատրել ինտերնետ տրամադրող կազմակերպության խնդիրներով, սակայն այդ կազմակերպության աշխատակիցների պնդմամբ (մեր հարցմանն ի պատասխան) խնդիրն իրենց տրամադրած կապի հետ կապված չի եղել: Դա նաև ապացուցվում է այն հանգամանքով, որ փորձարկվել են հայաստանյան այլ կայքեր ևս և հասանելիության խնդիր չի արձանագրվել: Ավելին, ֆինանսների նախարարության աշխատակիցները հիմնականում խորհրդատվություն էին տրամադրում այն հարցերի կապակցությամբ որոնք բավական մանրամասն նկարագրված են ուղեցույցում, սակայն կայքի հասանելիության ապահովմանն ուղղված և/կամ հայտի ներկայացման որևէ այլընտրանքային եղանակով ներկայացման ուղղությամբ որևէ գործուն քայլեր չեն ձեռնարկվել:

Այս ամենի արդյունքում «Ֆիլիշին» ՍՊԸ հայտը չի մուտքագրվել և որպես մասնակից ընկերությունը չի գրանցվել:

Այնուհետև, սպառված համարելով հայտն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու բոլոր հնարավորությունները, Կազմակերպության ներկայացուցիչը հայտը ներկայացրել է թղթային տարբերակով առձեռն ՀՀ ֆինանսների նախարարություն:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Կազմուսկերպությունը «armeps.am» կայքի տեխնիկական խնդիրների պատճառով, ի հեճուկս ժամանակին ձեռնարկված միջոցների չի կարողացել ժաւքանակին ներկայացնել հայտը և հետևաբար հայցում է իր կամքից անկախ պատճառներով ժամկետի բացթողումը համարել հարգելի և իր հայտը ընդունված:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետությունն ... իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն. « ... 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն

է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում գրված է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Հաշվի առնելով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված գնումների կարևոր նշանակությունը և այդ կարևորության գիտակցումը, մեր կողմից առայժմ բարձրացվում է ոչ թե գնումների գործընթացի անվավերության, այլ ընդամենը իրավունքի իրացման հարցը և հետևաբար մեր ներկայացրած հայտի ընդունման հարցը:

Այսպիսով խախտվել է բողոքաբերի գնումների գործընթացին մասնակցելու օրենքով ամրագրված իրավունքը:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով անցկացվող գնումներին մասնակցելու համար հայտի ներկայացման ժամկետի բացթողումը համարել հարգելի և Կազմակերպության հայտը համարել ընդունված:

2. Եթե բողոքը քննող անձը գտնի, որ առաջին պահանջը հնարավոր չէ բավարարել, ապա խնդրել են մրցույթն անվավեր ճանաչել՝ Կազմակերպության կամքից անկախ պատճառներով մասնակցության անհնարինությամբ պայմանավորված:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 05.08.2019թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուի նրեկայացուցիչները ներկայանալով նշանակված նիստերին բանավոր կերպով միջնորդել են բողոքի քննությանը ներգրավվել էլեկտրոնային գնումների համակարգի՝ armeps.am կայքի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության ներկայացուցչին, քանի որ բարձրացված խնդիրը տեխնիկական բնույթի է:

Նշել են նաև, որ նույն օրը armeps.am կայքի որևէ խափանում չի եղել, քանի որ Պատվիրատուի աշխատակիցների կողմից իրականացվել են տարբեր գործողություններ, այդ թվում՝ ոչ ավտոմատ ծանուցումներ, և գուցե բողոքաբերի կողմից է տեղի ունեցել սխալը և վերջինս չի կարողացել իրականացնել հայտի ներբեռնումը:

4. <u>Երրորդ անձ «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

Ներկայանալով նիստին և ներկայացնելով գրավոր դիրքորոշում Երրորդ անձի ներկայացուցիչը հայտնել է, որ՝ *«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով բաց մրցույթ, որին ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ն և նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու արդյունքում ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից /մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 8 ընկերություններ/:*

Այնուհետև ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով բաց մրցույթի մասնակցության հայտ չներկայացած «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. բողոք է ներկայացվել բողոքներ

քննող անձ Լ. Օհանյանին, որով բողոքաբերը հայտնում է, որ armeps.am համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով չի կարողացել հայտ ներկայացնել ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով բաց մրցույթին և արդյունքում բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով անցկացվող գնումներին մասնակցելու համար հայտի ներկայացման ժամկետի բացթողումը համարել հարգելի և Կազմակերպության հայտը համարել ընդունված:

2. Եթե բողոքը քննող անձը գտնի, որ առաջին պահանջը հնարավոր չէ բավարարել, ապա խնդրում ենք մրցույթն անվավեր ճանաչել՝ Կազմակերպության կամքից անկախ պատճառներով մասնակցության անհնարինությամբ պայմանավորված:

Գտնում ենք, որ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն անհիմն է, դրանում ներկայացված փաստերը հիմնավորված չեն որևէ ապացույցով, որի պայմաններում, գտնում ենք, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով բաց մրցույթին սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել թվով 8 ընկերություններ, որոնց հայտերը հաջողությամբ բեռնվել են armeps.am համակարգ, իսկ արդեն Մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ներկայացված բողոքով բերված այն հանգամանքը, որ armeps.am համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել բեռնել հայտը՝ գտնում ենք, որ չի համապատասխանում իրականությանը, քանի որ եթե իսկապես armeps.am համակարգում առկա է եղել տեխնիկական խնդիրներ, ապա որևէ մասնակցի հայտ չէր կարող բեռնվել, իսկ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով բաց մրցույթին են ներկայացրել թվով 8 ընկերություններ, այդ թվում նաև «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ն, ուստի և հիմնավորված չէ բողոքաբերի այն պնդումը, որ armeps.am համակարգի պատճառով հնարավոր չի եղել բողոքաբերի կողմից նշված ողջ ժամանակահատվածում՝ 26.07.2019-29.07.2019թթ., հայտ ներկայացնել:

Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/57 բողոքի շրջանակներում բողոքաբերը մեջբերումներ է կատարում նաև թեժ գծին կատարված զանգերի վերաբերյալ, այնուհետև նաև ՀՀ ՖՆ աշխատակիցների կատարված զանգերի հետ կապված, որը մեր կարծիքով, չի կարող ապացույց հանդիսանալ առ այն, որ armeps.am համակարգը ունեցել է տեխնիկական խափանում, որն անհնարին է դարձրել բողոքաբերի կողմից հայտի ներբեռնումը:

Բացի այդ, նշված բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստը՝ այն է, armeps.am համակարգի տեխնիկական խափանումը, որևիցե ապացույցով հիմնավորված չէ, այլ կրում է վերացական հայտարարության բնույթ: Գտնում ենք, որ նշված փաստը հնարավոր էր ապացուցել բացառապես ՀՀ ֆինանսների նախարարությանը հարցում կատարելու և համապատասխան պաշտոնական պատասխան ստանալու միջոցով, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ սույն բողոքի 1-ին կետում նշված պահանջը ընդհանրապես դուրս է «Գնումների մասին" ՀՀ օրենքով գնումների հետ կապված բողոքներ քննող անձին վերապահված լիազորությունների շրջանակից:

Իսկ նման վերացական, առանց հիմնավոր ապացույցների պայմաններում բողոքի բավարարումը երկրորդ պահանջի մասով, այն է վիճարկվող ընթացակարգը չկայացած հայտարարելը, անխուսափելիորեն կհանգեցնի այլ մասնակիցների, այդ թվում նաև «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ-ի իրավունքների և օրինական շահերի խախտմանը:»:

Ելնելով վերը նշված փաստերից և փաստական հանգամանքներից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/57 բողոքը մերժել:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով 18.06.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով armeps.am համակարգի միջոցով հայտ ներկայացնելու անհնարինության պատճառով, «Ֆիլիշին» ՍՊԸ-ն թղթային տարբերակով 29.07.2019թ.-ին հայտ է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Բողոքներ քննող անձը 12.08.2019թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/26598-20109 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը հայտնել, թե արդյո՞ք հնարավոր է «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից հայտը չներկայացնելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի (29.07.2019թ.-ի ժամը 09:37-ից մինչև 11:00-ն) խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե այո, ապա հայտնել խափանման պատճառների մասին տեղեկատվություն:

Միաժամանակ, հաշվի առնելով որ ներկայացված բողոքով բողոք բերողի իրավունքի խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին, ուստի հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 15-րդ կետի դրույթները Բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանը նույն գրությամբ խնդրել է ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի (անձանց) մասնակցությունը (ներկայությունը) 16.08.2019թ.-ին ժամը 15:45-ին կայանալիք նիստին:

Ի պատասխան վերոնշյալ գրությանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է հետևյալը՝ *«ուսումնասիրելով ներկայացված գրությունը՝ հայտնում ենք, որ «Ֆիլիշին» ՍՊԸ-ն նման խնդրով 29/07/2019թ. թիվ Մ-34208-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, որի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը ներկայացվել է 31/07/2019թ. թիվ /26-1/12797-2019 գրությամբ (գրությունները կցվում են):*

Տեղեկացնում ենք, որ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնման ընթացակարգերը իրականացվում են armeps.am էլեկտրոնային գնումների համակարգերի միջոցով, որոնց տեխնիկական սպասարկումն ապահովում է «Այյուներթվորքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Պուշկինի փ., 38/1 շենք, շին. 55):

Ելնելով վերոգրյալից՝ բողոքարկման ընթացակարգում էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձին (անձանց) ներգրավվելու նպատակով անհրաժեշտ է դիմել վերոհիշյալ կազմակերպությանը:»:

«Ֆիլիշին» ՍՊԸ-ն 29.07.2019թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած դիմումով հայտնել է, որ. *«Երևանի քաղաքապետարանի կողմից*

կազմակերպած թիվ ԵՔ-ՊՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով գնումների մրցույթին մասնակցելու վերջնաժամկետն էր 29.07.2019թ ժամը 11:00:

Գնումների մասնակցելու համար 29.07.2019թ ժամը 9:30-ից սկսած փորձել ենք ներկայացնել հայտ, սակայն armeps.am էլեկտրոնային կայքի բազմակի խափանումների պատճառով չի հաջողվել ավարտին հասցնել հայտի ներկայացման գործընթացը:

Այդ ընթացքում փորձել ենք խորհրդատվություն ստանալ Քաղաքապետարանից և ֆինանսների նախարարությսն համապատասխան աշխատակցից, ում հետ հնարավոր է եղել կապ հաստատել միայն ժամը 11:05 րոպե: Մինչ այդ հեռախոսակապ հաստատելը. փորձերը ևս ապարդյուն են եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայացնում ենք թիվ ԵՔ-ՊՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով գնումների մրցույթին մասնակցելու հայտը և կից փաստաթղթերը: Խնդրում ենք ժամկետի բացթողումը համարել հարգելի, քանի որ այն տեղի է ունեցել մեր կամքից անկախ պատճառներով, հայտը համարել ժամանակին ներկայացված: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ըստ անհրաժեշտության ներկայացված հայտի ընդունման հարցի շրջանակներում կներկայացնենք անհրաժեշտ ապացույցներ:

Հարցերի և պարզաբանումների անհրաժեշտության դեպքում կներկայանանք անձամբ, այդ թվում էլեկտրոնային եղանակով հայտը ներկայացնելու մեր կամքից անկախ պատճառներով ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու ապացույցները և վկայությունները կներկայացնենք լրացուցիչ ըստ պահանջի:»:

Վերոնշյալ դիմումին կից ներկայացվել է «Ֆիլիշին» ՍՊԸ-ի «Դիմում-հայտարարություն»-ը և «Գնային առաջարկ»-ը՝ էլեկտրոնային թվային ստորագրված 26.07.2019թ.-ի դրությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.07.2019թ. թիվ /26-1/12797-2019 գրությամբ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի դիմումին ի պատասխան հայտնել է, որ. *«էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի հայտարարման օրից՝ 18/06/2019թ. մինչև բացման օրը՝ 29/07/2019թ· վերջինիս համար armeps էլեկտրոնային գնումների համակարգում իրականացվել է թվով 8 հայտի բեռնում, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:*

Հայտնում ենք նաև, որ 29/07/2019թ. armeps էլեկտրոնային գնումների համակարգը աշխատել է անխափան, որով իրականացվել է 117 հայտի փաթեթի բեռնում՝ թվով 218

ընթացակարգերի համար՝ այդ թվում ժամը 09:30-ից մինչև ժամը 11:00-ն ընկած ժամանակահատվածում համակարգում իրականացվել է 6 հայտի ներբեռնում՝ ժամը 09:44-ին, ժամը 09:49-ին, ժամը 10:32-ին, ժամը 10:36-ին, ժամը 10:41-ին և ժամը 10:45-ին, որոնցից ժամը 10:32-ի և ժամը 10:36-ի հայտերը ներբեռնվել են վերոգրյալ ընթացակարգի համար, ինչպես նաև հարկ է նշել, որ բացի հայտերի ներբեռնումից վերոգրյալ ժամանակահատվածում համակարգում ընթացել է թվով 900 գործողություն:

Ինչ վերաբերում է «Ֆիլիշին» ՍՊԸ-ի հայտ ներբեռնելու անհաջող փորձերին, հայտնում ենք, որ վերջինս 29/07/2019թ. ժամը 09:35-ին մուտք է գործել համակարգ, վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի շրջանակում հետաքրքրություն է ցուցաբերել ժամը 10:48-ից, սակայն մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտ չի ներբեռնել, այն դեպքում, երբ ժամը 10:48-ից մինչև 11:00-ն համակարգում առանց խափանումների իրականացվել է 180 գործողություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով: Մասնավորապես, օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:»:

Բողոքներ քննող անձը 12.08.2019թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/26598-20109 գրությամբ, դիմելով «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին, խնդրել է ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի (անձանց) մասնակցությունը (ներկայությունը) 27.08.2019թ.-ին ժամը 16:10-ին կայանալիք նիստին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված բողոքով բողոք բերողի իրավունքի խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին, և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 15-րդ կետի դրույթները:

Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

Ընկերության ներկայացուցիչ Լուսինե Առուստամյանի ներկայացրած բացատրության համաձայն՝ «*Ես Լուսինե Մելիքի Առուստամյանս, 29.07.2019թ. մուտք եմ գործել www.armeps.am կայք էլեկտրոնային տարբերակով հանրային մրցույթներին մասնակցելու նպատակով իմ ծանոթ կազմակերպության հայտը համակարգ մուտք անելու համար, որպեսզի վերջինս հնարավորություն ունենար մասնակցելու Երևանի քաղաքապետարանի հայտարարած վերելակների (տեղադրումով) բաց մրցույթին /ծածկագիրը՝ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16/:*

Նշեմ բողոքներս նշված համակարգի նկատմամբ հերթականությամբ.

Նախ նշված կայքի կոնտակտներ բաժնում նշված է հեռախոսահամար, որի հետ իբրև թե քաղաքացին պետք է կարողանա կապ հաստատել համակարգի հետ կապված ճշտումներ իրականացնելու համար, որն իրականում անհնարին է: Ինչքան զանգահարում ես նշված +37411289320 հեռախոսահամարին ցույց է տալիս զբաղված կամ ընդհանրապես պատասխանող չկա երեք զանգից հետո անմիջապես հեռախոսակապը անջատվում է: Նույնիսկ փորձել եմ զանգահարել ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գիծ /011-800-188/ բողոքս ներկայացնելու և ինձ հետաքրքրող հարցի պատասխանը ստանալու համար, թեժ գծի հեռախոսավարուհին տալիս է մեկ այլ հեռախոսի համար 011-289328, որին զանգահարելիս նույն պատկերն է, կամ պատասխանող չկա, կամ երեք զանգից հետո անմիջապես հեռախոսակապը անջատվում է: Նշված փաստը թեժ գծի հեռախոսավարուհուն ներկայացնելուց հետո, վերջինս պատասխանում է, որ ոչնչով չի կարող օգնել: Ինչ խոսք բազմաթիվ չարչարանքներից հետո մեկ թե երկու անգամ կարողացել եմ կապ հաստատել մի երկու հարցի պատասխան ստացել եմ, բայց դա չեմ համարում հասանելի և անհրաժեշտ օգնություն նշված պատասխանատու գործում նշված համակարգը լիարժեք և արդյունավետ համարելու համար:

Բացի այդ, նշված կայքում կան բազմաթիվ տեղեկություններ, որոնք արդի չեն և համարվում են հնացած ինֆորմացիա, որը թյուրիմացության մեջ է գցում կայքից օգտվողներին: Օրինակ ուղեցույցում նշված է, որ պետք է ներկայացնել գրանցման հայտարարություն, մինչդեռ վերջինս 2012թ. կարգ է, որը փոփոխության է ենթարկվել, կամ ուղեցույցում նշված է, որ պետք է 1500 ՀՀ դրամ գանձել հայտ ներկայացնելու համար, որը

նույնպես այժմյան համակարգում չի գործում, և նմանատիպ մի շարք այլ թյուրիմացության մեջ գցող հանգամանքներ, որոնք դժվարացնում են նշված համակարգից օգտվելու հնարավորությունները և հավասար պայմանները քաղաքացիների համար:

Ինչ վերաբերում է հայտ ներկայացնելուն, ապա պետք է փաստել, որ եթե բաց մրցույթի մասնակցության վերջնաժամկետ է սահմանվել հուլիսի 29-ին ժամը 11:00-ը, ապա էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով անձը պետք է կարողանա իր իրավունքը իրացնել մինչև 11:00-ն ներառյալ, ինչը սակայն նշված համակարգում փաստացի հնարավոր չէ իրականացնել:

Այսպես' ես 29.07.2019թ. առավոտյան ժամը 9:37 մուտք եմ գործել www.armeps.am կայք և հենց առաջին մի քանի րոպեի ընթացքում կայքը սկսեց թերի աշխատել 9:39-9:43 ժամանակահատվածում կայքը սառել էր պայմանագրեր բաժնի վրա և չէր ակտիվանում այլ գործողություն անելու համար և հենց մեկ այլ հրահանգ էի փորձում սեղմել էկրանին հայտնվում էր պատուհան նշված Not found error: Այս ընթացքը մոտավորապես տևել է մինչև ժամը 10:37: Այս թյուրիմացությունը հասկանալու համար փորձեցի այլ կայք մուտք գործել հասկանալու համար ինտերնետի անսարքություն է, թե կայքի, Ֆեյսբուք սոցիալական կայք մուտք գործելու արդյունքում պարզ դարձավ, որ ինտերնետի խնդիր չէ, այլ հենց armeps համակարգի, նույնիսկ փորձեցի բջջային հեռախոսով մուտք գործել /10:13/ կրկին նույն պատկերն էր չէր ակտիվանում:

Այդ ընթացքում փորձում էի զանգահարել << ֆինանսների նախարարության համապատասխան հեռախոսահամարով 011-289320, թյուրիմացությունը ճշտելու համար, 9:50-10:12, սակայն կրկին ապարդյուն, հեռախոսահամարը կրկին ոչ հասանելի էր, երեք զանգ և հեռախոսակապը անջատվում էր: Բազմաթիվ փորձարկումներից հետո, միայն ժամը 10:44 հնարավոր եղավ կապ հաստատել նշված հեռախոսահամարով և հենց այդ պահից էլ սկսած armeps համակարգը սկսեց գործել: Հեռախոսավարուհին ինձ պատասխանեց, որ միայն վունդերկինդը կկարողական 10 րոպեի ընթացքում հայտ ներկայացնել նշված համակարգում, ես էլ ասեցի, որ հնարավոր չէ կապ հաստատել իրենց հետ, վերջինս փորձեց մի քանի քայլով արագ ներկայացնել քայլերի հերթականությունը և մաղթեց հաջողություն:

Վերոգրյալից կարող ենք փաստել, որ նշված համակարգը գործում է թերի և ոչ հավասար պայմաններ է ստեղծում հանրության համար դրանից օգտվելու և էլեկտրոնային գնումներին մասնակցելու համար: Թերի համակարգի շնորհիվ հնարավոր չեղավ հայտը

մուտք անել համակարգ և ոտնահարվեց անձի էլեկտրոնային գնումներին մասնակցելու իրավունքի իրացումը:»:

27.08.2019թ.-ին հրավիրված նիստով նույնաբովանդակ բացատրություններ տվեցին նաև Ընկերության ներկայացուցիչներ՝ Քրիստինե Պետրոսյանն ու Սերգեյ Ղազարյանը:

Ucom և Beeline ինտերնետային օպերատորների կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ ինտերնետ ծառայությունների վերաբերյալ ցանցային ընդհանուր խափանում չի գրանցվել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոռում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և **իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով**.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն

հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար վերելակների ձեռքբերման նպատակով 18.06.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով armeps.am համակարգի միջոցով հայտ ներկայացնելու անհնարինության պատճառով, «Ֆիլիշին» ՍՊԸ-ն 29.07.2019թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարություն դիմում է ներկայացրել, որին կից ներկայացվել է «Ֆիլիշին» ՍՊԸ-ի «Դիմում-հայտարարություն»-ը և «Գնային առաջարկ»-ը՝ էլեկտրոնային թվային ստորագրված 26.07.2019թ.-ի դրությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ֆիլիշին» ՍՊԸ-ին տրված գրությամբ չի հիմնավորվում, թե համակարգի անխափան աշխատելու պայմաններում, «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 10:48-ից մինչև 11:00-ն ընկած ժամանակահատվածում հայտը ի՞նչ պատճառներով չի ներբեռնվել համակարգ, այն է՝ ակտիվ գործողությունների՞ (armeps.am կայքից օգտվել չկարողանալու կամ սխալ գործողությունների), թե՞ պասիվ անգործության (հայտը ներբեռնելուն ուղղված գործողություններ չկատարելով):

Այսինքն՝ խնդրո առական ոչ թե համակարգի աշխատանքն է, այլ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից իրականացված գործողությունը կամ անգործությունը, որի արդյունքում հնարավոր չի եղել ներբեռնել հայտը՝ համակարգի անխափան աշխատելու պարագայում:

Այս, վերը նշված, հարցերի պարզաբանման համար էր «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն հրավիրվել բողոքի քննությանը մասնակցելու համար, սակայն վերջինս հանդիսանալով armeps.am համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող միակ ընկերությունը, ըստ էության որպես անկախ, գործով ոչ մի կողմի իրավունքներով և պատականություններով չշահագրգռված մասնագիտական կազմակերպություն, ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 15-րդ կետի դրույթների հիման վրա, չի ներկայացել նիստին՝ չներկայացնելով նաև որևէ մասնագիտական կարծիք:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Ընկերության ներկայացուցիչների տված բացատրությունները, Ընկերության կողմից հայտը նույն օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելը, վերջինիս տված գրությունը, ինչպես նաև «Դիմում-հայտարարություն»-ը և «Գնային առաջարկ»-ը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված հայտը ժամանակին ներկայացնելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Անդրադառնալով գործում առկա այլ փաստերին, Բողոքներ քննող անձը արձանագրում է հետևյալը.

1. «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դիմում-հայտարարություն»-ը և «Գնային առաջարկ»-ը՝ էլեկտրոնային թվային ստորագրված 26.07.2019թ.-ի դրությամբ:

2. Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, առաջարկելով նշված չափաբաժինների մասով պայմանագիրը կատարել համապատասխանաբար՝ 12 366 816 ՀՀ դրամ և 2 409 120 ՀՀ դրամ ընդհանուր գներով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի նախահաշվային գինը կազմել է 17 880 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնինը՝ 4 200 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության համաձայն՝ վերը նշված չափաբաժինների մասով ներկայացված նվազագույն գինը համապատասխանաբար կազմել է 21 439 200 ՀՀ դրամ և 47 292 000 ՀՀ դրամ: Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և հանձնարարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունների արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջարկվել է համապատասխանաբար՝ 18 900 000 ՀՀ դրամ և 43 100 000 ՀՀ դրամ, կրկին ներկայացնելով նախահաշվային գնից բարձր գնային առաջարկներ:

5. Անդրադառնալով Հանձնաժողովի 05.08.2019թ.-ին կայացած նիստին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի արդեն 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից պարզ ու հստակ է, որ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը: Միևնույն ժամանակ մեջբերված հոդվածի դրույթներից հստակ է, որ գնման գործընթացը կարող է կասեցումից հանվել մի միայն Բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշման հիման վրա՝ պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, ելնելով հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ.-ին ներկայացված բողոքը Բողոքներ քննող անձին (Լ. Օհանյանին) է մակագրվել 02.08.2019թ.-ին, նույն օրը բողոքը ընդունվել է վարույթ և gnumner.am պաշտոնական կայքում տեղադրվել է բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը, դրանով իսկ, օրենքի ուժով, կասեցնելով գնման գործընթացը:

Նման պայմաններում, հաշվի առնելով, որ բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից՝ գնման գործընթացը օրենքի ուժով կասեցվել է, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի վերաբերյալ 02.08.2019թ.-ից հետո կատարված բոլոր գործողություններն ոչ իավաչափ են և հակասում են Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2019թ. ներկայացված բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել «Ֆիլիշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն ընդունելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**